ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. հունիսի 1-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ
Վահան Բերակչյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **26.05.2023թ.-ի «ԲԿՄԱ»-«Փյունիկ» (ՊԼ-167) խաղի ժամանակահատվածում 1) «Փյունիկ» թիմի մարզիչ Չիրո Վերդիի (31786) կողմից մրցակից թիմի անձնակազմին անվայել ժեստ ցուցադրելը և վերջիններիս հասցեին հայհոյանք հնչեցնելը 2) «ԲԿՄԱ» թիմի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի (138) կողմից մրցակից թիմի մարզչի հասցեին հայհոյելը, 3) տոմսային համակարգի բացակայությունը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի մարզիչ Չիրո Վերդիի (31786) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա՝ համակցելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը և Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը, ինչպես նաև հիմք ընդունելով

Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 խաղով և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամ չափով:

2) Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի (138) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա՝ համակցելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը և Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը, ինչպես նաև հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 խաղով և «ԲԿՄԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամ չափով:

3) Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «ԲԿՄԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

Որակազրկումը տարածվում է 26.05.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

2. 26.05.2023թ.-ի «Վան»-«Շիրակ» (ՊԼ-170) խաղի ժամանակահատվածում 1) «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Մաջիկո Ջունիոր Տրաորեի (44513) կողմից մրցակից ֆուտբոլիստի հասցեին հայհոյանք հնչեցնելը, 2) «Վան» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Մանոյանի (3535) կողմից մրցակից ֆուտբոլիստի հասցեին հայհոյանք հնչեցնելը, 3) «Վան» թիմի կողմից գովազդային կողավահանակների ոչ պատշաճ տեղադրումը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Մաջիկո Ջունիոր Տրաորեի (44513) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա՝ համակցելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը և Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը՝ որակազրկել 2 խաղով և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Վան» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Մանոյանի (3535) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա՝ համակցելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը և Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը՝ որակազրկել 2 խաղով և «Վան ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

3) Հաստատված համարել «Վան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 46-րդ կետը՝ «Վան ՖԱ»

ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

Որակազրկումը տարածվում է 26.05.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

3. 27.05.2023թ.-ի «Նոա»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-169) խաղն ուշացումով սկսելը՝ շտապ օգնության 3 բոպե ուշ ժամանման պատճառով

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. 30.05.2023թ.-ի «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի սեփական դիմումի համաձայն «Լեռնային Արցախ-07», «Լեռնային Արցախ-08», «Լեռնային Արցախ-09», «Լեռնային Արցախ-11» թիմերի ՀՀ ֆուտբոլի 2022-2023թթ. մրցաշրջանի մանկապատանեկան առաջնություններին հետագա մասնակցությունից հրաժարումը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1. Հաստատված համարել «Լեռնային Արցախ-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը, Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը և հիմք ընդունելով ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգի (2022-2023 մրցաշրջան) 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Լեռնային Արցախ-07» թիմին հեռացնել Մ-16Ա առաջնությունից, խաղերի արդյունքները համարել չեղյալ:
2. Հաստատված համարել «Լ.Արցախ-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը, Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը և հիմք ընդունելով ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգի (2022-2023 մրցաշրջան) 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Լ.Արցախ-08» թիմին հեռացնել Մ-15Բ առաջնությունից, խաղերի արդյունքները համարել չեղյալ:
3. Հաստատված համարել «Լ. Արցախ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը, Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը և հիմք ընդունելով ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգի (2022-2023 մրցաշրջան) 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Լ. Արցախ-09» թիմին հեռացնել Մ-14Գ1 առաջնությունից, խաղերի արդյունքները համարել չեղյալ:
4. Հաստատված համարել «Լեռնային Արցախ-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը, Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը և հիմք ընդունելով ՀՖՖ

Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգի (2022-2023 մրցաշրջան) 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Լեռնային Արցախ-11» թիմին հեռացնել Մ-12Մ7 առաջնությունից։